ԴԱՍ 13. ԳԼՈՒԽ 7 — 144.000-Ի ԿՆՔՎԵԼԸ

6-րդ գլուխն ամփոփվում է հետևյալ նախադասությամբ. «Որովհետև եկել է Նրա բարկության մեծ օրը. և ո՞վ կարող է կանգնել»: Հաջորդ գլուխը, կարծես, պատասխանում է այս հարցին:

- Կնքված ծառաները. 7:1-8
  - 144.000-ը 12 ցեղերից
- Փրկված ծառաները. 7:9-17
  - Նեղություններից

1) «Եվ սրանից հետո տեսա չորս հրեշտակների, որոնք կանգնել էին երկրի չորս անկյուններում, և պահում էին երկրի չորս կողմերը, որպեսզի երկրի վրա քամի չփչի, և ոչ էլ՝ ծովի կամ որևէ մի ծառի վրա»: 2) «Եվ մի ուրիշ հրեշտակ տեսա, որ արևելքից եկավ, և որ կենդանի Աստծո կնիքն ուներ: Եվ բարձր ձայնով նա կանչեց այն չորս հրեշտակներին, որոնց երկրին և ծովին վնաս պատճառելու իշխանություն էր տրված»:

Այս հրեշտակները, երևում է, այն չորսն են, ովքեր պետք է հնչեցնեին առաջին չորս փողերը 8-րդ գլխում:

3) «Ասելով. «Երկրին վնաս մի՛ պատճառեք, ոչ էլ ծովին կամ ծառերին, մինչև մեր Աստծո ծառաների **ճակատները կնքենք**»: 4) «Եվ լսեցի կնքվածների թիվը, որ **հարյուր քառասունչորս հազար էր**, ու կնքված էին **Իսրաելի որդիների** բոլոր ցեղերից»:

Այս 144.000-ը պահվում են (կնքվում են) նեղությունների մեջ, ոչ թե «նեղություններից» դուրս, ինչպես գրված է Հայտ. 3:10:

> Որովհետեւ իմ համբերութեան խօսքը պահեցիր, ես էլ քեզ կ’պահեմ այն փորձության ժամից, որ գալու է այս աշխարհի վրա, որ փորձէ երկրի երեսի վրա բնակողներին:

Աստված միշտ իր ծրագիրն ունի իր ժողովրդի Իսրայելի համար, և նա նրանց ամբողջությամբ դուրս չի գցել.

> **Հռ. 11:25 -** 25 Որովհետեւ չեմ կամենում, եղբայրներ, որ անգետ լինեք այս խորհրդին, որ ձեր անձերումը իմաստուն չ’լինիք, որ **մի մասով** Իսրայէլին կուրություն եղավ, մինչեւ որ հեթանոսների լրութիւնը մտնէ: (Կարդա հմ. 26)

Նշում. «Աստծո պարգևներն ու կոչումն անդառնալի են» (Հռոմ. 11:29):

- **Այս կնքումը ոչ թե փրկության համար է, այլ պաշտպանական կնիք, որը երաշխավորում է այդ 144 000 մարդու անվտանգությունը:**

  Բաբելոնյան գերությունից առաջ

  Եզ. 9:4-6 - 4 Եւ Տէրը ասեց նորան. Անց կաց քաղաքի միջով այսինքն
  Երուսաղէմի միջով, եւ նշան դիր այն մարդկանց ճակատներին որ
  հառաչում եւ ողբում են նորա մեջ արած բոլոր պղծութիւնների համար։ 5 Եւ
  միւսներին ասեց իմ ականջների առաջին. Գնացէք նորա ետեւից քաղաքի
  միջով եւ զարկէք, ձեր աչքերը չխնայեն, եւ չողորմէք։ 6 Ծերին,
  երիտասարդին, եւ կոյսին ու երեխային ու կանանցը սպանեցէք փչացրէք,
  բայց ամեն ով, որ վերան նշանը լինի՝ նորան մի մօտենաք, եւ իմ
  սրբարանից սկսեցէք։ Եւ նորանք սկսեցին այն ծեր մարդկանցից, որ տան
  առաջին էին։

- **Սուրբ Հոգին յուրաքանչյուր ծնված կրկին հավատացյալի կնիքն է:**
  - **2 Կոր. 1:21-22 -** 21 Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը եւ մեզ
    օծողը Աստուած է. 22 Որ մեզ կնքեց էլ. եւ Հոգու գրավը մեր սրտերի մէջ
    տուաւ։
  - **Եփ. 1:13-14 -** 13 Որ նորանում եւ դուք հուսացիք, երբոր ճշմարտության
    խօսքը լսեցիք՝ ձեր փրկության ավետարանը, որին էլ երբոր
    հավատացիք՝ խոստմուի Սուրբ Հոգով կնքուեցիք։ 14 Որ մեր
    ժառանգութեան գրաւն է, մինչեւ ստացուածքի փրկությունը, նորա
    փառաց գովասանքի համար։
  - **Եփ. 4:30 -** 30 Եւ մի տրտմեցնէք Աստուծո Սուրբ Հոգին, որով կնքուեցաք
    փրկության օրուա համար։
  - **Հով. 6:27 -** 27 որովհետեւ Աստուած Հայրը կնքեց նորան։

5) «**Հուդայի** ցեղից կար տասներկու հազար կնքված, **Ռուբենի** ցեղից՝ տասներկու հազար կնքված, **Գադի** ցեղից՝ տասներկու հազար կնքված»: 6) «**Ասերի** ցեղից՝ տասներկու հազար կնքված, **Նեփթաղիմի** ցեղից՝ տասներկու հազար կնքված, **Մանասեի** ցեղից՝ տասներկու հազար կնքված»: 7) «**Շմավոնի** ցեղից՝ տասներկու հազար կնքված: **Ղևիի** ցեղից՝ տասներկու հազար կնքված, **Իսաքարի** ցեղից՝ տասներկու հազար կնքված»: 8) «**Զաբուղոնի** ցեղից՝ տասներկու հազար կնքված, **Հովսեփի** ցեղից՝ տասներկու հազար կնքված, **Բենիամինի** ցեղից՝ տասներկու հազար կնքված»:

- 4-րդ գլխից սկսվում հրեականությունը. «Առյուծ», «Գառ», «Դավթի արմատ» և այլն:
- Երկու ցեղ պակասում են. Դան և Եփրեմ:

Տասներկու ցեղերը

Բաժանված թագավորությունը

Ք.Ա. 930թ.-ին թագավորում էր Հերոբովամը Հյուսիսային թագավորությունում, որի մայրաքաղաքը Սամարիան էր (Գ Թագ. 11:43-12:33): Երբ Հերոբովամը Հյուսիսային թագավորությունը տարավ կռապաշտության, Ղևտացիները (և նրանք, ովքեր ուզում էին հավատարիմ մնալ) հեռացան հարավ՝ Ռոբովամի մոտ (Բ Մն. 11:14-17):

Հյուսիսային թագավորության անկումը

Ք.Ա. 724թ.-ին Սալմանասար V-ը 3 տարով պաշարեց Սամարիան: Իսրայելի Հովսեա թագավորը փորձեց ապստամբել Ասորեստանի դեմ՝ չվաճրելով տարեկան հարկը (Եգիպտոսի փարավոնի հետ պայմանավորվածությունը չաշխատեց) և Սամարիան՝ Հերոբովամի մայրաքաղաքը, ընկավ Ք.Ա. 722թ.-ին (Դ Թագ. 18:2):

Բաբելոնացիների բարձրանալը

Ք.Ա. 586թ.-ին, երբ Բաբելոնացիները գերեվարեցին Հարավային թագավորությունը, Իսրայելի բոլոր 12 ցեղերից էլ մարդիկ կային այնտեղ: Երբ բաբելոնացիները զավթեցին Ասորեստանը, Հյուսիսային թագավորությունից գերիները, ըստ ամենայն հավանականության, նորից միախառնվեցին Հուդայի գերիների հետ: Եսային, մարգարեանալով Հուդայի համար, նրանց դիմում է որպես «Հակոբի տուն, որ կոչված է Իսրայելի անունով…» (Ես. 48:1, հհ. 12-14):

Բաբելոնյան գերությունից հետո

«Հրեա» և «Իսրայելացի» անունները փոխարինաբար օգտագործվում էին. Եզրասը վերադարձող մնացորդը անվանում է «Հրեաներ» 8 անգամ, «Իսրայել» 40 անգամ: Եզրասը խոսում է «ամբողջ Իսրայելի» մասին (Եզր. 2:70, 3:11, 8:35, 10:25): Նեեմիան խոսում է «ամբողջ Իսրայելի» մասին (Նեեմ. 12:47): Մնացորդը, որ վերադարձավ Բաբելոնից, ներկայացնում էր «ազգը» (Մաղ. 1:1):

Նոր Կտակարանի անվանակարգությունը

Ասվում է, որ մեր Տերն Իրեն զոհեց ազգի համար. «Իսրայելի տան կորսված ոչխարների համար» (Մաթ. 10:5-6, 15:24): Նոր Կտակարանը խոսում է «**Իսրայելի**» **մասին 75 անգամ** և «**Հրեաների**» **մասին 174 անգամ** (Գործք 21:39, 22:3, Հռոմ. 11:1, Բ Կորն. 11:22, Փիլ. 3:5 և այլն), «Տասերկու ցեղեր» (Գործք 26:7, Հակ. 1:1)

144.000-ի կնքվելը. Իսկ ինչու՞ է Դանի ցեղը պակասում

- Մարգարեություններ.
  - Հակոբը. «Օձ…» (Ծնն. 49:17)
  - Մովսես. «Բասանից դուրս նետվող» (Բ Օր. 33:22)
- Հեռացավ վիճակով տրված տարածքից (Դատ. 18)
  - Դեբորա հաղթության երգը. «Դանը մնաց իր նավերի մեջ» (Դատ. 5:17)
- Դուրս է թողնված ազգաբանությունից (Ա Մն. 1-8)
- Չի կնքվում Նեղությունների ժամանակ (Հայտ. 7)
- Այն ցեղն է, որի միջոցով կռապաշտությունը մտավ Իսրայելի երկիր (Ղևտ. 24:10-16, Դատ. 18:1,2,30-31)

- Հայհոյեց Եհովայի անունը և անիծեց.

- 30 Եւ Դանի որդիները քանդակած կուռքը կանգնեցրին իրանց համար, եւ Հոփսաթանը՝ ինքը եւ իր որդիները մինչեւ երկրի գերության օրը Դանի ցեղի քահանաներն էին։ 31 Ուստի նորանք Միքայի շինած կուռքն իրենց համար պահեցին, որչափ ժամանակ որ Աստուծո տունը Սելովի մէջ էր։

- Ուրացության առաջնորդ Հերոբովամի օրոք (Գ Թագ. 12:28-30)

  Եւ թագաւորը խորհեց ու երկու ոսկէ հորթ շինեց եւ ասեց նորանց. Բավական է ձեզ Երուսաղէմ գնալ. ահա քո աստուածները, ով Իսրայէլ, որոնք ձեզ տուրս հանեցին Եգիպտոսի երկրից։ 29 Եւ մէկը դրեց Բեթէլ իսկ միյուսը Դանում։ 30 Եւ այս բանը մեղքի պատճառ դառաւ, եւ ժողովուրդը գնում էր մինչեւ Դան հորթերից մեկին երկրպագելու։

  - և 100 տարի անց (Դ Թագ. 10:29)

    Յէուն, սակայն, Իսրայէլին մեղանչել տուող Նաբատի որդի Յերոբովամի մեղքերից, այսինքն՝ Բեթէլի ու Դանի ոսկէ երինջներից չհրաժարուեց։

  - «Թշվառության գույժ» (Եր. 4:15, Ամովս 8:14)
  - Անեծք. Եր. 8:16
- Կռապաշտների անունը պիտի ջնջվի (Բ Օր. 29:18-21)

Բայցևայնպես, Դանը պետք է դատի իր ժողովրդին Իսրայելի ցեղերից մեկի պես (Ծնն. 49:16), և Դանը ժառանգություն է ստանում Հազարամյայում (Եզ. 48:1):

Եփրեմ. նույնպես պակասում է

Եփրեմը նմանապես նույնացվում է Հերոբովամի կռապաշտության հետ (Օվսեա 4:17):

9) «Սրանից հետո տեսա, ահա՛, մի մեծ բազմություն, որ ոչ մեկը չէր կարող հաշվել՝ բոլոր ազգերից ու ցեղերից ու ժողովուրդներից ու լեզուներից, որոնք կանգնել էին աթոռի առջև ու Գառնուկի առջև՝ ճերմակ հանդերձանքով և ձեռքներին արմավենու ճյուղեր բռնած»: 10) «Եվ բարձրաձայն աղաղակում էին՝ ասելով՝ «Փրկությունը մեր Աստծունն է, որ գահին է նստում, և Գառնուկինը»:

Այս բազմությունը պահպանվում է (կնքվում է) Նեղությունների մեջ, ոչ թե «ազատվում է Նեղություններից», ինչպես գրված է Հայտ. 3:10: Ահա այստեղ տեղի է ունենալու աշխարհում երբևէ տեղի ունեցած մեծագույն հունձքը: (Գրված է Ես. 49:10-12, 60:1-3): Հովել 2:28-32 (մեջբերված է Գործք 2:16-21-ում) կապ ունի Մեծ Նեղությունների այս մարգարեությունների հետ:

11) «Եվ բոլոր հրեշտակները, որ գահի շուրջբոլորն էին կանգնել ու երեցների և չորս կենդանիների շուրջը, երեսնիվայր ընկան գահի առջև ու Աստծուն երկրպագեցին»: 12) «Ասելով. «Ամեն: Օրհնություն ու փառք և իմաստություն ու գոհություն և պատիվ ու զորություն և կարողություն մեր Աստծուն՝ հավիտյանս հավիտենից: Ամեն»: 13) «Ու երեցներից մեկը պատասխանեց՝ ինձ ասելով. «Սրանք, որ ճերմակ հանդերձանքով են, ո՞վ են, և որտեղի՞ց եկան»»:

Հակասություններ

Նեղությունների սրբերը	24 երեցները
• Պսակներով չեն	• Պսակներով են
• Արմավենիներ ունեն ձեռքերում	• Տավիղներ, ոչ թե արմավենիներ
• Փրկված են Նեղությունների միջից	• «Պահպանված» են Նեղություններից
• Կանգնած են գահի առջև	• Նստած են գահերին
• Ծառայում են Նրան գիշեր ու ցերեկ	• Թագավորում են որպես թագավորներ (Ա Կորն. 6:2,3, Ա Պետ. 2:9, Հայտ. 1:6):
• Հովհաննեսը չէր ճանաչում նրանց	

Հաջորդ դասի համար

Կարդացեք Հայտնություն 8-րդ գլուխը

Կարդացեք Հեսու 5:13-6:27